ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2020 թվականի N 176 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի նոյեմբերի 29-ի N 649- Ա հրամանը՝

որոշում եմ.

1. Հաստատել 2020 թվականի 2-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 17-ի N ՍՊ/20.1/10461-20 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող հսկողության հարցաշարով:
3. Անհրաժեշտության դեպքում հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):
5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ համայնքում հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ 2020 թվականի հուլիսի առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

X _____

Signed by: CHOBANYAN HAYK 1503730050

15 հունիսի 2020թ.
ք. Իջևան

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի
15 հունիսի 2020 թվականի N 176 - Ա որոշման

2020 թվականին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

Հ/հ	Համայնքի անվանում	Իրականացվելիք հսկողության ժամանակահատվածը	Իրականացվելիք հսկողության բնագավառ	Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1	Նոյեմբերյան	2-րդ եռամսյակ	բնապահպանություն առևտուր և զբոսաշրջություն արտակարգ իրավիճակներ և պաշտպանություն ՏԻՄ պարտադիր լիազորություններ և ոստիկանություն ֆինանսներ քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն հողաշինություն և հողօգտագործում մշակույթ ֆիզիկական կուլտուրա և սպորտ առողջապահություն սոցիալական պաշտպանություն գյուղատնտեսություն և անասնաբուժություն տրանսպորտ և կապ քաղաքացիական ակտերի գրանցում	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Թաթուլ Ստեփանյան Ռոբերտ Գուլակյան Գուրգեն Հարությունյան Սամվել Սուքոյան Հայկ Փաշինյան Աղաբեկ Գալստյան Ժորա Խաչատրյան Միսակ Մելքումյան, Արմեն Ճաղարյան Համլետ Փիրումյան Մարինե Խաչատրյան Արթուր Վանեսյան Ռուբեն Տիգրանյան Հարություն Քոչարյան, Նարինե Ճաղարյան Արկադի Ամիրխանյան Արտակ Սարգսյան Գագիկ Մելիքբեկյան

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

15.06.2020

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ